

Երևանի Մխիթար Հերացու անվան պետական
բժշկական համալսարանի ռեկտոր՝
պրոֆ. Ա.Ա. Մուրադյանին
Երևան քաղաքի բնակիչ Նվարդ Ավետիսյանից

Մեծարգո պարոն Մուրադյան

Ես՝ Նվարդ Ավետիսյանս, իմ հարգանքի և երախտագիտության խոսքն եմ ուզում հղել «ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՎԻՐԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»-ի Անոթային վիրաբուժության բաժանմունքի ղեկավար, անոթային վիրաբույժ Ռուսլան Պալոյանին, բժիշկներ Մեսրոպ Ավետիսյանին, Վան Խաչատրյանին, ինչպես նաև բուժքույրերին և մայրապետներին: Միայն նրանց հոգատարությունը և մասնագիտական կոմպետենտությունն օգնեցին ինձ շուրջ մեկուկես տարի ծանր առողջական վիճակում գտնվելուց հետո հաղթահարել վիրահատական և հետվիրահատական բարդ շրջանները, ոտքի կանգնել, և անցնել իմ բնականոն կյանքին: Հարգելի բժիշկներ՝, Ձեր բարձր պատասխանատվությամբ և անմնացորդ նվիրումով գիշերուզոր կարևոր ներդրում եք ունենում մարդկանց կյանքի և առողջության պահպանման գործում:

Ձեզ ի սրտե մաղթում եմ ուժ և եռանդ՝ այս պատասխանատու և դժվարին առաքելությունը նվիրումով կատարելու, ինչպես նաև մասնագիտության պատիվը բարձր պահելու գործում:

Ձեր երդմանը հավատարիմ՝ դուք նվիրվել եք մեր քաղաքացիների առողջության պահպանման և կյանքի որակի բարելավման շնորհակալ գործին:

Շնորհակալությամբ.

Մեծարյալ 11.11.2024.
Գ.Ավետիսյան